

«ՀԱՅՐԵՆԻՔ ՇԻՆ» ՍՊԸ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մ. Ֆրունզեի փողոցի 10/4 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման

**ՇՐՋԱԿԱ ՍԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**



«ՀԱՅՐԵՆԻՔ ՇԻՆ» ՍՊԸ տնօրեն՝

Ա.Մնացականյան

ԵՐԵՎԱՆ
Փետրվար 2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	7
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ.....	7
4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	11
4.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր.....	11
4.1.1. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ	11
4.1.2. Ջրամատակարարում և ջրահեռացում	16
4.1.3. Օդափոխություն.....	18
4.2 Շինարարության կազմակերպում.....	18
4.2.1. Բնառեսուրսների օգտագործում.....	21
5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	23
5.1 Բնապահպանական պայմանների բնութագրեր	23
5.2 Տարածքի սեյսմիկ բնութագրեր	25
5.3 Բուսական և կենդանական աշխարհ	25
5.4 Պատմամշակութային հուշարձաններ	26
5.5 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում.....	26
5.6 Օդային ավազան	27
5.7 Ջրային ռեսուրսներ.....	27
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	28
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	30
8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ	31
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	33

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ.....	34
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	36
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ.....	40
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....	41
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐ.....	42
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ... ..	46
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՈՌՈԳՈՒՄ.....	48
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ).....	49
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ.....	56
ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ.....	59
ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՅՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻ ՁԵՎ.....	60
ՀԱՎԵԼՎԱԾ 12. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ... ..	64
ՀԱՎԵԼՎԱԾ 13. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ.....	65

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՊՄ - անհատական պաշտպանական միջոցներ

ԲԱՄ - բողոքների արձագանքման մեխանիզմ

ԲԿՊ - քննապահական կառավարման պլան

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՀՀՇՆ - Հայաստանի Հանրապետության շինարարության նորմեր

ՆԳՀ - նախնական գնահատման հայտ

ՇՄԱԳ - շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՇՄՆ - Շրջակա միջավայրի նախարարություն

ՇՄՄՏԿ - Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն

ՊՈԱԿ - պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՍՊԸ - սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՋնՋ – ջրամատակարարում և ջրահեռացում

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեության նպատակ	Երևան քաղաքի Մ. Ֆրունզեի փողոցի 10/4 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում
Ձեռնարկող	«Հայրենիք Շին» ՍՊԸ Հասցե՝ ք.Երևան, Անդրանիկի 120, բն. 37
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Կոնտակտային անձ՝ Արթուր Մնացականյան Հեռ.՝ (+ 374 93) 15 16 16 amnatsakanyan15@gmail.com ՆԳՀ-ի մշակման պատասխանատու՝ Ք.Սահակյան Հեռ.՝ (+ 374 91) 529-327 sks091279@gmail.com
Խորհրդատու (նախագծող) կազմակերպություն	«ՏԵՍՔ» ՍՊԸ, Հասցե՝ ք. Երևան, Ձորափի 70/3 Կոնտակտային անձ՝ Գայանե Հովհաննիսյան (+374 93) 43 48 58 (բջջ.) E-mail: gayane.architect@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ք.Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Ֆրունզեի փողոց 10/4
Կառուցապատվող տարածքի մակերեսը	2430.76 մ ²

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակված է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզեի 10/4 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման համար, որի նախաձեռնողը/պատվիրատուն հանդիսանում է «Հայրենիք Շին» ՍՊԸ-ն: Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծային աշխատանքներն իրականացվել են «ՏԵՍԲ» ՍՊԸ-ի կողմից:

Նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը մշակվել են Երևանի քաղաքապետի կողմից 09.12.2019թ. տրված N 01/18-07/1-Չ-658-1265 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով «Հայրենիք Շին» ՍՊԸ-ին պատկանող հողամասի սահմաններում:

Բազմաբնակարան բնակելի շենքի նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել.

1. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը,
2. Տեղագրական հանույթը,
3. 2020թ. «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից իրականացված դաշտային երկրաֆիզիկական հետազոտությունները, ինժեներարկրաբանական հետազոտություններն ու եզրակացությունը,
4. N 01/18-07/1-Չ-658-1265 նախագծման թույլտվությունը՝ տրված 09.12.2019թ.,
5. ՀՀ ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը,
6. Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով:

Նախատեսվող տվյալ գործունեության իրականացումը ենթադրում է բնապահպանական ազդեցության գնահատման իրականացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզեի փողոցի 10/4 հասցեում նախատեսված բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը (կառուցապատման մակերեսը կազմում է մոտ 2430 մ²):

Ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Նախատեսվող գործունեության ՆԳՀ-ը իրականացվել է ՀՀ օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան:

Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,
- նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները, լուսանկարները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի ներկայացում (ներառյալ՝ հանրային լուսմների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա

միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, իրավական այլ ակտերից և կառավարության մի շարք որոշումներից:

ՀՀ Սահմանադրության (2015) 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման վերաբերյալ՝ դեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Ստորև ներկայացված են շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ մի շարք օրենքներ և կառավարության որոշումներ.

➤ **ՀՀ օրենքներ**

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման «հայեցակարգերի» պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության և շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների, որոնք դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999)
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական,

արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002)
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք
- «ՀՀ անտառային օրենսգիրք» (2005)
- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006)
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)
- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

➤ **ՀՀ կառավարության որոշումներ**

- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության 25.09.2014թ. «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ս, կառավարության 10.12.2015թ. նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 և կառավարության 27.05.2015 նիստի «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր (բերված են ստորև) և կոնվենցիաներ՝ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ (ցանկն առկա է ՀՀ ՇՄՆ <http://www.mnp.am/> ինտերնետային էջում)։

➤ **Միջազգային համաձայնագրեր.**

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)

- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-Շանեյրո)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել):

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 “Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին” N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակը (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

4.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր

4.1.1. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Շենգավիթ-վարչական շրջանի Ֆրունզեի 10/4 հասցեում:

Հողամասի մակերեսը կազմում 4057.16 մ² (համաձայն անշարք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի, որը բերված է [հավելված 1-ում](#): Սույն գործունեությամբ նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր՝

բաղկացած վերգետնյա և ստորգետնյա հատվածներից: Կառույցը, որի կառուցապատման մակերեսը կազմում է 2430.76 մ², նախատեսվում է իրականացնել երեք ստորգետնյա և տասնչորս վերգետնյա հարկերով:

Նախատեսվող գործունեության համար առկա է Երևանի քաղաքապետի կողմից 09.12.2019թ. տրված N 01/18-07/1-Չ-658-1265 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը բերված է [հավելված 2](#)-ում):

Նախատեսվող գործունեության տարածքը մի կողմից՝ տրանսպորտային մոտեցմամբ, հարում է Ֆրունզեի փողոցի վերջնամասին, իսկ մյուս կողմից՝ Բայդուկով փողոցին: Տարածքի իրադրության սխեման բերված է [հավելված 3](#)-ում:

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի, ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների, ինչպես նաև Պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի պահանջների համաձայն:

Համաձայն նախագծային փաստաթղթերի բնակելի համալիրը բաղկացած է երկու բարձրահարկ բնակելի մասնաշենքերից (երեք ստորգետնյա և տասնչորս վերգետնյա հարկերով): Մասնաշենքերի վերգետնյա և ստորգետնյա շինությունները միմյանցից անջատված են հակասեյսմիկ կարաններով:

Մասնաշենքերի կառուցման համար ընտրվել է ե/բ մոնոլիտ ծածկերով կարկասային համակարգ՝ բաց երանգի տրավերտինի և բազալտի արտաքին երեսպատմամբ:

Երկու բարձրահարկ մասնաշենքերը նախագծված են միաձույլ երկաթբետոնե (ե/բ) շրջանակակապային հիմնակմախքով, իսկ ստորգետնյա մասնաշենքերը (ըստ սեյսմիկ կարանների տարանջատված են 4 ստորգետնյա մասնաշենքեր)՝ միաձույլ ե/բ շրջանակային հիմնակմախքով: Հիմքերի համար որպես հիմնատակ ծառայում է ճալքարակոպճային գրունտը՝ R₀=250կպա, գրունտի կարգը ըստ սեյսմիկ հատկության՝ 2րդ, (մանրամասների համար տես՝ ինժեներաերկրաբանական եզրակացությունը):

Հարաբերական 0.00 նիշը համապատասխանում է 900.80 բացարձակ նիշին:

Վերգետնյա 2 մասնաշենքերը տասնչորս հարկանի են, որոնց **հիմքերը** ժապավենային են նախագծված հիմնային սալից (0.4մ հաստությամբ) և շենքի երկու փոխուղղահայաց ուղղություններով խաչաձև հիմնային հեծաններով: Հիմնային հեծաններն ունեն 1.6մ բարձրությամբ և 1.0մ լայնությամբ հաստությ: **Սյուների** լայնական հաստոյթները ունեն հետևյալ չափերը՝ 0.8x0.6մ, 0.6x0.6մ, 0.5x0.5մ, **պարզունակները** լայնական հաստությամբ ունեն 0.6x0.6մ, 0.6x0.8մ (h=0.8մ) չափերի հաստատուն կտրվածք: Մասնաշենքերի միաձույլ երկաթբետոնե **պատերը** ունեն 0.6մ, 0.4մ, 0.3մ հաստություն: **Ծածկերը** միաձույլ ե/բ-ից են՝ հենված պարագծով պարզունակների վրա՝ մինչև 0.000 նիշը ունեն 0.2մ հաստություն իսկ ավելի բարձր 0.18մ: **Աստիճանները** միաձույլ են՝ երկաթբետոնե:

Այս մասնաշենքերի կրող ե/բ կոնստրուկցիաները նախագծված են B25 դասի ծանր բետոնից: Ամրանավորումը նախատեսված է A500C դասի ամրանից $\phi 8$ - $\phi 32$ տրամագծի

և A-I դասի ամրանից $\phi 8$ - $\phi 10$ տրամագծի: Այս մասնաշենքերի արտաքին պատերը և միջնորմները նախագծված են թեթև բլոկներից, թեթև լցաշարով, ամրանավորված A500C դասի ամրանով $\phi 8$ տրամագծի: Արտաքին պատերը հանդիսանում են հիմնակմախքի լցաշար և ամրացվում են, ինչպես և միջնորմները, հիմնակմախքի հետ ճկուն կապերով:

Կառույցի վերգետնյա հատված

- **Մասնաշենք 1-ը** (վերգետնյա) հատակագծում ունի ուղղանկյուն ուրվագիծ, երկայնական ուղղությամբ շենքը յոթ թռիչքային, երեք ստորգետնյա և տասնչորս վերգետնյա հարկանի շրջանակ է՝ համապատասխանաբար 7×7.0 մ քայլերով, լայնական ուղղությամբ շենքը երկթռիչքային, երեք ստորգետնյա և տասնչորս վերգետնյա հարկանի շրջանակ է՝ համապատասխանաբար 2×7.0 մ քայլերով: Այս մասնաշենքը բաղկացած է 2 սեկցիայից:
- **Մասնաշենք 2-ը** (վերգետնյա) հատակագծում ունի ուղղանկյուն ուրվագիծ, երկայնական ուղղությամբ շենքը երեք թռիչքային, երեք ստորգետնյա և տասնչորս վերգետնյա հարկանի շրջանակ է՝ համապատասխանաբար 3×7.0 մ քայլերով, լայնական ուղղությամբ շենքը երկթռիչքային, երեք ստորգետնյա և տասնչորս վերգետնյա հարկանի շրջանակ է՝ համապատասխանաբար 2×7.0 մ քայլերով:

Վերգետնյա առաջին հարկում նախատեսված են 720.52 մ² հասարակական տարածքներ՝ 4.20 մ բարձրությամբ: Յուրաքանչյուր մուտքի բնակելի հարկերում նախատեսված են 53.2 քմ-ից 130.76 քմ մակերեսներով 1-ից մինչև 4 սենյականոց բնակարաններ, որոնց թիվը յուրաքանչյուր հարկում 4-5 է՝ կախված հարկերի տարբեր համադրություններից: Բնակելի հարկի բարձրությունը 3.3 մ է:

Տիպարային հարկերում բնակարանները ապահովված են միջանցիկ և անկյունային լուսավորությամբ և օդափոխությամբ: Յուրաքանչյուր բնակարանի համար նախատեսվում է բաց պատշգամբ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի տանիքում նախատեսվում է տեղադրել ֆոտովոլտային արևային վահանակներ, որոնք ապահովելու են շենքի մուտքերի և արտաքին դեկորատիվ լուսավորությունը, ինչպես նաև էլ. հոսանքով սնուցելու են վերելակները: Մասնաշենք 1-ի տանիքին նախատեսվում է տեղադրել թվով 104 LA Solar (415 Վտ) տիպի արևային վահանակներ, որոնց տարեկան արտադրողականությունը կկազմի $58\,500$ կՎտ ժ: Մասնաշենք 2-ի տանիքին կտեղադրվեն թվով 33 LA Solar (415 Վտ) տիպի արևային վահանակներ, որոնց տարեկան արտադրողականությունը կկազմի $20\,130$ կՎտ ժ:

Կառույցի ստորգետնյա հատված

Հիմնվելով հակասեյսմիկ կարաններով տարանջատման վրա, ստորգետնյա հատվածները իրենց հերթին տարանջատված են 4 մասնաշենքերի (3, 4, 5 և 6 մասնաշենքեր), որոնք նախագծված են ժապավենային **հիմքերով**, մասնաշենքերի երկու փոխողոհահայաց ուղղություններով խաչաձևված են հիմնային հեծաններով: Հիմնային հեծաններն ունեն 1.6 մ բարձրությամբ և 0.7 մ լայնությամբ հատույթ: **Սյուների** լայնական հատույթները 0.5×0.5 մ չափերի են, **պարզունակները** լայնական հատույթում ունեն

0.5x0.6մ (h=0.6մ) չափերի հաստատուն կտրվածք: Նկուղային հարկում արտաքին պարփակող պատերն իրականացված են միաձույլ երկաթբետոնից, ունեն 0.4մ հաստություն և ծառայում են որպես կոշտության դիաֆրագմաներ: **Օսծկերը** միաձույլ ե/բ-ից են՝ հենված պարագծով պարզունակների վրա 0.2մ հաստությամբ:

- **Մասնաշենք 3-ը** (ստորգետնյա) հատակագծում ունի ուղղանկյուն ուրվագիծ, երկայնական ուղղությամբ շենքը յոթ թռիչքային և երեք ստորգետնյա հարկերով շրջանակ է՝ համապատասխանաբար 6.1մ, 5x7.0մ, 4.8մ քայլերով, լայնական ուղղությամբ շենքը չորս թռիչքային, երեք ստորգետնյա հարկերով շրջանակ է՝ համապատասխանաբար 6.0մ, 3x7.0մ քայլերով:
- **Մասնաշենք 4-ը** (ստորգետնյա) հատակագծում ունի ուղղանկյուն ուրվագիծ, երկայնական ուղղությամբ շենքը երկթռիչքային և երեք ստորգետնյա հարկերով շրջանակ է՝ համապատասխանաբար 2x7.0մ քայլերով, լայնական ուղղությամբ շենքը մեկթռիչքային, երեք ստորգետնյա հարկերով շրջանակ է՝ համապատասխանաբար 6.1մ քայլով:
- **Մասնաշենք 5-ը** (ստորգետնյա) հատակագծում ունի ուղղանկյուն ուրվագիծ, երկայնական ուղղությամբ շենքը երկթռիչքային և երեք ստորգետնյա հարկերով շրջանակ է՝ համապատասխանաբար 2x7.0մ քայլերով, լայնական ուղղությամբ շենքը մեկթռիչքային, երեք ստորգետնյա հարկերով շրջանակ է՝ համապատասխանաբար 5.1մ քայլով:
- **Մասնաշենք 6-ը** (ստորգետնյա) հատակագծում ունի ուղղանկյուն ուրվագիծ, երկայնական ուղղությամբ շենքը երկթռիչքային և երեք ստորգետնյա հարկերով շրջանակ է՝ համապատասխանաբար 2x7.0մ քայլերով, լայնական ուղղությամբ շենքը մեկթռիչքային, երեք ստորգետնյա հարկերով շրջանակ է՝ համապատասխանաբար 3.9մ քայլով:

Եռահարկ ստորգետնյա հատվածում, որոնց 2 մուտքերը կազմակերպված են հարավային ճակատի բակային հատվածից, նախատեսված են ավտոկայանատեղիներ՝ ընդհանուր առմամբ 164 մեքենայի համար: Նկուղային հարկում նախատեսված է նաև 8 ավտոկայանատեղի՝ հաշմանդամների համար: Ավտոկայանատեղիները ըստ հարկերի առանձնացված են հակահրդեհային ինքնափակվող դռներով: Եռահարկ ստորգետնյա ավտոկայանատեղին, որի բոլոր հարկերի գումարային ընդհանուր մակերեսը մոտ 3500մ² է, նախագծված է այնպես, որպեսզի նշված տարածն՝ ըստ անհրաժեշտության, հնարավոր լինի կիրառել նաև որպես ապաստարան:

Առաջին (գրոյական) հարկում կազմակերպված են երեք բնակելի մուտքեր, յուրաքանչյուրը 2-ական վերելակներով՝ մարդատար և բեռնատար, ինչպես նաև 20 մուտքեր հասարակական տարածքների համար: Բնակելի մուտքերը կազմակերպված են միջանցիկ՝ բնակիչներին հնարավորություն տալով մուտք գործել շենք արտաքին և բակային կողմից չծխացող աստիճանավանդակներով: Աստիճանավանդակները նկուղային հարկերում, ինչպես նաև առաջին հարկից առանձնացված է հակահրդեհային ինքնափակվող դռներով: Բնակելի հարկերում ընդհանուր միջանցքը

աստիճանավանդակից առանձնացված է հակահրդեհային ինքնափակվող դռներով: Բոլոր հարկերի աստիճանահարթակներում նախատեսվում է տեղադրել «էլք» գրությամբ վթարային լուսավորության սարքեր:

Նախատեսվող գործունեության գլխավոր հատակագիծը բերված է [հավելված 4](#)-ում, իսկ մասնաշենքերի՝ ներառյալ ավտոկայանատեղիների բաշխման սխեմաները՝ [հավելված 5](#)-ում:

Բոլոր մասնաշենքերի հաշվարկն իրականացվել է ЛИРА-САПР 2016 R5 հաշվարկային համակարգի միջոցով: Մասնաշենքերը հաշվարկվել են որպես տարածական մոդելներ վերտիկալ ստատիկ բեռնվածքների և սեյսմիկ ազդեցության տակ թվային, տառային և վերտիկալ ուղղություններով:

Բնակելի համալիրի կողային կանաչ հատվածում տեղակայված կլինեն մանկական խաղահրապարակը, ծաղկանոցը, շվաքարանը և այլ բարեկարգումներ: Բակային հատվածի կանաչ զազոնը տեխնիկապես հարմարեցված կլինի հրշեջ մեքենայի մուտք ու էլքի համար, որի գրունտներում նախատեսվում է փռել գեոտեքստիլ շերտ:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ որոշ ընդհանուր տեխնիկատնտեսական ցուցանիշներ բերված են աղյուսակ 1-ում, իսկ ընդհանուր համայնապատկերը՝ նկ.1-ում:

Աղյուսակ 1. Նախատեսվող գործունեության ընդհանուր տեխնիկատնտեսական ցուցանիշներ

անվանումը	մակերես (մ2)	%	վերգն տնյա	ստորգն տնյա	մարդատար	բեռնատար	մասնաշենք 1	մասնաշենք 2	1 սենյականոց բն.	2 սենյականոց բն.	3 սենյականոց բն.	4 սենյականոց բն.	քանակ	կայանատեղ	մեքենա
ընդհանուր հողատարածք	4057,16	100													
կանաչապատում	1632,36	40,2													
զազոն	1145,60														
Էկոլոգիկնոց (գեոտեքստիլ շերտով)	266,60														
մուտքի կանաչապատ ծածկեր	220,16														
ընդհանուր կառուցապատում	2430,76	59,9													
1-ն հարկի շին մակերես	1081,40														
սավվածք	189,68														
թեքահարթակներ, աստիճաններ	82,89														
մայթ	65,13														
վտղոց	974,46														
պարիսպ	37,20														
կառույցի ընդ-շինարարական մակերես	27014,28														
կառույցի ընդ-օգտակար մակերես	16982,1														
հարկանություն			14	3											
վերելակ					3	3									
մուտքեր	2498,32						2	1							
բեակարաններ	12765						104	52	45	46	59	6	156		
կոմերցիոն տարածքներ	720,52						7	3					10		
Ավտոկայանատեղ	3496,59													149	164
սպասարկման տարածքներ	467,37												15		



Նկար 1: Նախատեսվող բնակելի համալիրի ընդհանուր համայնապատկերը

Աշխատանքային նախագծով մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կիրականացվի ներքին և արտաքին հսկողությունը, հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգ և այլն:

4.1.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Քաղաք Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզեի 10/4 հասցեում կառուցվող բնակելի համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծն իրականացվել է պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, ճարտարապետաշինարարական գծագրերի և ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների՝ СНиП 2.04.01-85 համաձայն, որում հաշվի են առնվել նաև շահագործման ընթացքում հրդեհանվտանգության պայմանները:

Ջրամատակարարման և ջրահեռացման նախագծի համար հիմք են հանդիսացել նաև

- ճարտարապետա-շինարարական գծագրերը և գլխավոր հատակագիծը,
- տեղանքի տոպոգրաֆիական հանույթը,
- տարածքի ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները:

ՋնՋ համակարգերի միացումը քաղաքային համապատասխան ցանցերին իրականացվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների համաձայն (տեխ. պայմանները բերված են [հավելված 2](#)-ում):

Խմելու-տնտեսական և հակահրդեհային ջրամատակարարում: Շենքի ջրամատակարարումն իրականացվում է քաղաքային ջրատարից՝ համաձայն տրված տեխնիկական պայմանի: Բոլոր խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե

ջերմամեկուսիչ նյութով: Շուրջօրյա անխափան ջրամատակարարումն ապահովելու նպատակով առաջին հարկում նախատեսված է պոմպակայան՝ երկու խումբ պոմպերով, որոնցից առաջին խումբն իրենից ներկայացնում է խմելու տնտեսական և հակահրդեհային ջրամատակարարման երեք պոմպով կայանք, իսկ երկրորդ խումբը՝ ավտոկայանատեղի հակահրդեհային ջրամատակարարման երկու պոմպով կայանք: Հակահրդեհային էլքը բնակելի մասի համար կազմում է 1×2.5 լ/վրկ: Բոլոր հարկերում նախատեսված են $d=50$ մմ հրշեջ ծորակներ $L=20$ մ փողրակներով և $d=16$ մմ ծայրափողով:

Ներքին ցանցը մոնտաժվելու է պոլիպրոպիլենային խողովակներից, որոնք բոլորը կջերմամեկուսացվել ռետինե ջերմամեկուսիչ նյութով: Յուրաքանչյուր բնակարանի համար սառը ջրագծերի վրա նախատեսված են ջրաչափեր և ճնշման կարգավորիչներ, որոնք տեղադրված կլինեն հորանում: Ջրաչափեր նախատեսված են նաև յուրաքանչյուր առանձին տիպի այլ ջրասպառողների (հասարակական նշանակության տարածքների) ջրագծերի վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի համալիրի գազաֆիկացումը նախատեսվում է հետագա փուլերում և այս փուլում դեռևս չի իրականացվելու, տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել յուրաքանչյուր բնակարանում տեղադրված անհատական կաթսաներից, որի ներքին ցանցը մոնտաժվելու է պոլիպրոպիլենային խողովակներից: Հետագա գազաֆիկացման դեպում այս կաթսաները ևս կարող են պահպանվեն՝ հանդիսանալով այլընտրանք գազաֆիկացման ժամանակավոր դադարեցման (օրինակ՝ վթարային անջատումներ և այլն) դեպքում տաք ջրամատակարարում ապահովման համար:

Կենցաղային կոյուղի: Կենցաղային կոյուղու համակարգը նախատեսված է իրականացնել ինքնահոս, որը իրականացվելու է պոլիվենիլքլորիդե խողովակներից՝ սարքավորված ռետինե սեղմիչ օղակներով: Կոյուղին կհեռացվի դեպի գոյություն ունեցող քաղաքային ցանց (Բաղյուկովի փողոցի կոյուղու հոր, նախատեսվող գործունեության տարածքից մոտ 35մ հեռավորության վրա), իսկ կոյուղու կանգնակները նախատեսված են օդափոխության հորանների մեջ:

Ներքին ջրհոս: Անձրևաջրերի և հալոցքաջրերի հեռացումը հարթ տանիքից նախատեսվում է կազմակերպել ջրահեռացման կանգնակներով՝ դեպի շենքի պարագծով նախատեսված ջրհավաք առվակ, որտեղից դրանք կհեռացվեն դեպի քաղաքային կոյուղու ցանց: Ներքին ջրհոսը նախատեսված է պոլիէթիլենային ՍՀԸ "T" տիպի խողովակներից, որոնք միանում են ռետինե սեղմիչ օղակներով: Խողովակներում ջրի սառեցումը բացառելու համար նախատեսված է էլեկտրական պարուրակ:

Ավտոկայանատեղերի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերի հեռացման համար նախատեսված են հոսակներ և ջրհավաք առվակներ, որոնցից ջրերը կուտակվում են մերձափոսի մեջ և դրենաժային պոմպով մղվում դեպի մոտակա կոյուղու հոր:

4.1.3. Օդափոխություն

Մայրաքաղաք Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզեի 10/4 հասցեում նախատեսված բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի օդափոխության և օդի լավորակման նախագիծն իրականացվել է համաձայն ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների, պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի և ճարտարապետաշինարարական գծագրերի:

Նախատեսված է ներածող-արտածող, բնական և արհեստական օդափոխություն: Բնակելի համալիրից օդի արտածումն իրականացվելու է խոհանոցներից՝ բնական եղանակով (արտածման ճաղաշարերով), իսկ սանհանգույցներից՝ առանցքային օդափոխիչների միջոցով: Այդ նպատակով նախատեսված են ցինկապատ թիթեղյա օդատարներ: Բնակելի հատվածի միջանցքներում նախատեսված են ծխահեռացման համակարգեր:

Ավտոկայնատեղիի համար նախատեսված է մեխանիկական դրդմամբ ներածման, արտածման, ծխահեռացման, հակահրդեհային օդափոխության համակարգեր:

Ներածման համակարգը տեղեկայված է լինելու բնակելի համալիրի տանիքն և սպասարկելու է նաև ստորգետնյա ավտոկայնատեղիի 3 հարկերը: Արտածման համակարգերը նախատեսված են առանձին՝ ըստ յուրաքանչյուր մասնաշենքի , իսկ նրանց օդամղիչները տեղակայված են լինելու տանիքում:

Ավտոկայնատեղին ապահովված է նաև ծխահեռացման համակարգերով, որոնք ապահովվում են բոլոր 3 հարկերի ծխահեռացումը հնարավոր հրդեհների ժամանակ: Հրդեհի դեպքում ներածման, արտածման համակարգերն անջատվում են անմիջապես միանում են ծխահեռացման օդամղիչները:

ՕԴ1 համակարգով կոմպենսացվում է հրդեհի ժամանակ հեռացվող օդը, իսկ ՕԴ2-ՕԴ4 համակարգերը նախատեսված են ավտոկայնատեղիի նախասրահների անցուղիների համար՝ ապահովելով հրդեհի ժամանակ մարդկանց ապահով էվակուցիան:

Վերելակների համար ևս նախատեսված են օդի դիմհարներ:

Ավտոկայնատեղին ապահովվաշ է լինելու նաև CO տվիչներով, որոնք ավտոմատ միացնում են օդափոխության համակարգերը՝ թույլատրելի կոնցենտրացիան գերազանցելու դեպքում:

Ծխահեռացման ծխատարները և դիմհարի օդատարները նախատեսվում է իրականացնել սև մետաղից՝ 1,2մմ հաստությամբ, որոնք պարբերաբար պետք է պատվեն հրակայուն երկշերտ ներկով:

4.2 Շինարարության կազմակերպում

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Ընդհանուր շինարարական աշխատանքների տևողությունը կազմում է 34 ամիս:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ համապատասխան շինարարական մեքենաների ու մեխանիզմների կիրառմամբ:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- ժամանակավոր ցանկապատի տեղադրում, շին. հրապարակի տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրում,
- ըստ անհրաժեշտության՝ կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Նախագծի հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն ներկայացված երկրաբանական կտրվածքի, համաձայն որի ընդհանուր հողային հանույթը կազմում է 38 971 մ³ է, որից ետլիցքը՝ 8787մ³ (այդ թվում՝ 240 մ³ բուսահող, որն ամբողջության կօգտագործվի տարածքի կանաչապատման համար): Հողային աշխատանքներից առաջացած մնացած գրունտի հիմնական մասը նախատեսվում է օգտագործել համահարթեցում իրականացնելու նպատակով: Շինարարական աղբը, որի ընդհանուր քանակը կազմում է 280 մ³, կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Լիցքային աշխատանքների ժամանակ լիցքի մեկ շերտում անթույլատրելի է տարատեսակ գրունտների օգտագործումը: Լիցքային գրունտի յուրաքանչյուր շերտ պետք է լցնել հողային պաստառի ողջ լայնությամբ՝ եզրից դեպի կենտրոն:

Շինարարական հրապարակը (շին. հրապարակի կազմակերպման սխեման բերված է [հավելված 6](#)-ում) ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես համալիրի վարչական տարածքի սահմաններում:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով, իսկ շինարարության տարածքը սահմանազատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Ելնելով շինարարության ոչ մեծ տևողությունից հատուկ շինարարական բազայի ստեղծումը նպատակահարմար չէ: Շին. հրապարակում առաջարկվում է նախատեսել կոնտեյնների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի գրասենյակ, հանդերձարան, ինչպես նաև պահեստներ, բիոզուգարաններ, աղբի տարրաներ և այլն:

Աղյուսակ 2. Առաջարկվող ժամանակավոր տնտեսության շենքեր և շինություններ

h/h	Անվանում	Քանակ	Ծանոթագրություն
1	գրասենյակ	2	կոնտեյներային
2	Հանդերձարան	3	կոնտեյներային
3	Հագուստի չորանոց	2	կոնտեյներային

4	Լոգարան		կոնտեյներային
5	Բիոզուգարան	3	-
6	Աղբի տարրաներ	2	կոնտեյներային
7	Լուսարձակներ	22	-
8	Հակահրդեհային վահանակ	4	
9	Բացօթյա պահեստ	2	-
10	Նյութերի պահեստ	2	կոնտեյներային
11	Ծածկ	2	-
12	Շինանյութերի պահեստ	2	կոնտեյներային

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել Երևան քաղաքի և նրա հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է 280 մ³ (ոչ պիտանի հանույթ) քանակով և կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 5տ:

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել միայն տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնության դեպքում:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Շինարարության և շահագործման փուլում առաջացած կենցաղային աղբը Երևան քաղաքը սպասարկող աղբահավաք ծառայության կողմից կտեղափոխվի մոտակա աղբավայր:

4.2.1. Բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է.

- հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանման/փոշենստեցման, հողի/գրունտի խոնավացման համար,
- անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների նպատակով:

Հաշվի առնելով, որ միաժամանակ շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է մոտ 2430 մ², ջրցանի հաշվարկն իրականացվել է տարածքի այդ չափի համար.

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ}$$

S1 - ջրվող տարածքի մակերես, 2430 մ²,

K1 - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²), տաք եղանակի պայմաններում ջրցան իրականացվում է օրական 2 անգամ:

T - հողային աշխատանքների օրերի քանակ, 66 օր:

Հետևապես ջրցանի ջրապահանջը կկազմի.

$$U1 = 2430 \times 2 \times 0.0015 \times 66 = 481.2 \text{ մ}^3$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N \times n1 \times N1) T1, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների թվաքանակ, 6 մարդ

N - ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ

T1 - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 748 օր

n1- բանվորների (այդ թվում՝ վարորդներ) թվաքանակ, 50 մարդ

N1 - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ

$$W_{\text{խ.տ}} = (6 \times 0.016 + 50 \times 0.025) \times 748 = 1006,8 \text{ մ}^3$$

$$\text{Ընդահանուր ջրապահանջը կկազմի՝ } 481.2 \text{ մ}^3 + 1006.8 \text{ մ}^3 = 1488 \text{ մ}^3$$

Շինարարության ընթացքում անհրաժեշտ տեխնիկական միջոցների ցանկը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Տեխնիկական միջոցների անվանացանկ*

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1.	Ավտովերամբարձ կոունկ	KC 65713-1	2
2.	Բեռնատար ավտոբետոնախառնիչ	СВ-69В	ըստ պահանջի
3.	Բոլորզեր	KOMATSU D-37-EX-22	1
4.	Ինքնաթափ ավտոմոբիլ	MA3 5550	6
5.	Էլ. եռակցման սարք	СТН-500	3
6.	Շարժական կոմպրեսոր	ЗИФ 55В	1
7.	Էքսկավատոր	Hundai 170W	2

* մեքենաների և մեխանիզմների կազմը տրված են խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների թիվը գնահատվում է առավելագույնը 50 մարդ, որից.

- ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 6 մարդ:
- արհեստագործներ և բանվորներ՝ 34 մարդ,
- մեքենավարեր և օգնականներ՝ 10 մարդ:

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս-արևմտյան եզրային հատվածում, Երևան քաղաքի հարավային մասում, որտեղ տարածքի ռելիեֆի հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելա ունի մեծ թեքություն: Մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակերևույթից 899.0-900.5մ սահմաններում:

Կլիմա: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը: Հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը կազմում է 25.8°C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61% (ժ.13-ին) է: Ձմեռը ցուրտ է և անհողմ, հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -3.6°C է, հարաբերական խոնավությունը՝ 77% (ժ.15-ին): Գերակշռում են 2-3մ/վ արագությամբ լեռնահովտային քամիները:

Համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում գրունտի սառեցման առավելագույն խորությունը կազմում է 0.6մ, իսկ ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգու/մ² է:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Երևանի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Աղյուսակ 3. Օդի ջերմաստիճանն՝ ըստ Երևանի օդերևութաբանական կայանի դիտարկումների, °C

Բնակավայր	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին մասական ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան	888	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Աղյուսակ 4. Օդի հարաբերական խոնավությունն՝ ըստ Երևանի օդերևութաբանական կայանի դիտարկումների, %

Բնակավայր	Օդի հարաբերական խոնավություն, %														
	Ըստ ամիսների												Միջին տարեկան	Միջինը ժամը 13-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Երևան	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Աղյուսակ 5. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթն՝ ըստ Երևանի օդերևութաբանական կայանի դիտարկումների

Բնակավայր	Տեղումների միջին ամսական քանակը, մմ օրական առավելագույն՝ ըստ ամիսների												Չյան ծածկույթը			
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարեկան	10-օրյա max., սմ	Օրերի թիվ	Ջրի max. քանակը ձյան մեջ, մմ
Երևան	24 24	23 23	32 34	35 29	45 42	23 34	11 29	8 37	12 51	29 35	28 36	21 28	291 51	58	47	-

Հիդրոերկրաբանական տեսակետից գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա: Ուսումնասիրվող տեղամասում մինչ 37մ խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել, իսկ ըստ արխիվային նյութերի դրանք գտնվում են 50 մ-ից խորը հորիզոններում:

Էկզոգեն երկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, փլուզումները, սողանքները, քարաթափությունը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի վրա, տարածքում բացակայում են:

Երկրաբանալիթոլոգիական կառուցվածք: «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է նախատեսվող մասնաշենքի տարածքի ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ: Կառույցի հիմնատակի գրունտների ուսումնասիրության համար կատարվել են 8 հորատանցքներ՝ մինչև 37մ հորատման առավելագույն հզորությամբ: Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և լաբորատոր տվյալների, ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ շերտերը.

Շերտ-1 Լիցքեր՝ կազմված խճի, խճավազի և մինչև 30-35% կավավազների խառնուրդից: Գրունտը թույլ խոնավ է և ունի լայն տարածում: Շերտի հորատված հզորությունը 0.5մ է: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆՆԿ IV-5-82-ի (24բ) III կարգ է:

Շերտ-2 Ավազակավեր՝ շագանակագույն, թույլ խոնավ կիսապինդ թանձրությամբ, խճի ու խճավազի մինչև 10-15% պարունակությամբ: Շերտն ունի լայն տարածում: Շերտի հորատված հզորությունը 2.5 - 6.5 մետր է: Ժամանակակից դեյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆՆԿ IV-5-82-ի (33գ) III կարգ է:

Շերտ-3 Ճալաքարակոպճային գրունտ ավազների մինչև 30-40սմ պարունակությամբ: Բեկորային նյութը բազալտային է՝ լավ, միջին և վատ հղկվածության: Գրունտը միջին խոնավ է և միջին խտության: Շերտն ունի լայն տարածում: Շերտի հորատված հզորությունը 27.2մ է: Չորրորդական ժամանակաշրջանի վերին պլիոցեն-պլեյստոցեն դարակարգի լճագետային նստվածքներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆՆԿ IV-5-82-ի (6գ) IV կարգ է:

Ելնելով ստացված տվյալներից պարզ է դառնում, որ նախագծվող շինության հարթակի երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում են լիցքեր, ավազակավեր, ճալաքարակոպճային գրունտներ:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափումները, փլուզումը և այլն ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից իրականացված ինժեներատեխնիկական և երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքների/եզրակացությունների (տես՝ նախագծային փաստաթղթեր, Ընդհանուր բացատրագիր), ուսումնասիրվող տեղամասում ինժեներատեխնիկական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքների իրականացման համար:

5.2 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում՝ $A_{max} = 0.4g$ արագացման առավելագույն մեծությամբ, 9 և ավելի բալ սեյսմիկությամբ:

5.3 Բուսական և կենդանական աշխարհ

Ծրագրի իրականացման տարածքը տեղակայված է ք. Երևանի Շենգավիթ վարչական շրջանում: Տեղանքը գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում, որտեղ բուսականությունը գրեթե բացակայում է:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ և կենդանատեսակ, բացակայում են նաև միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

Տարածքը զուրկ է բուսականությունից՝ բացառությամբ թվով 8 թեղի ծառատեսակներից, որոնք տեղակայված են տարածքի ձախակողմյա պատնեշից շուրջ 30մ հեռավորության վրա: Նշված ծառերը պահպանելու նպատակով նախագծով առաջարկվում է դրանք տեղափոխել ևս 25մ հեռու՝ դեպի կանչապատման ենթակա տարածք, որտեղ հողախառնուրդի ավելացմամբ հնարավոր կլինի ապահովել դրանց կենսունակությունը:

Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ նախատեսվում է 240մ³ ծավալով հողաբուսաշերտի (հզորությունը՝ մինչև 20սմ) հեռացում և ժամանակավոր պահեստավորում՝ հետագայում տարածքի բարեկարգման աշխատանքների ժամանակ օգտագործելու նպատակով: Հանված ծավալն ամբողջովին նախատեսվում է օգտագործել տարածքի բարեկարգման և կանաչ գոտու ու սիզամարգերի իրականացման համար:

Հողաբուսաշերտի հանումը, պահպանումն ու հետագա օգտագործումը կիրականացվի ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի N1396-Ն և 2017թ. 1404-ն որոշումներով սահմանված պահանջների համաձայն:

Բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել Ֆրուգեի 10/4 հասցեում գտնվող ցանկապատված հողատարածքի սահմաններում, որը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի, պատկանում է «Հայրենիք Շին» ՍՊԸ-ին:

5.4 Պատմամշակութային հուշարձաններ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ֆրուզեի 10/4 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում, որին հարակից/ազդակիր տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները կամ հուշարձանները:

5.5 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում

Նախատեսվող գործունեության տարածքը հանդիսանում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցմամբ «Հայրենիք Շին» ՍՊԸ-ին պատկանող հողատարածք (4057.16հա), որի համար առկա է Երևանի քաղաքապետի կողմից 09.12.2019թ. տրված N 01/18-07/1-Չ-658-1265 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը բերված է [հավելված 2](#)-ում):

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին տվյալ տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ, համաձայն որի 1632 մ² տարածքում կստեղծվեն կանաչապատ գոտիներ սիզամարգերի, տարբեր ծառատեսակների և ծականոցի համադրմամբ: Բացի այդ բնակելի համալիրի տանիքի որոշ հատվածներ ևս նախատեսվում է կանաչապատել: Կանաչապատման համար նախատեսված են հետյալ ծառերը և թփատեսակները.

- թույա սյունաձև – 10 հատ
- սպիտակ բարդի – 21 հատ
- սիրիական վարդ - 13 հատ
- ծորենի - 24 հատ
- փովոդ գիհի - 9 հատ
- ծաղկասածիլ – 900 հատ
- սիզամարգի սպորտային սերմ – 70 կգ

Կանաչապատման համար կիրառվող թփատեսակներն ու ծառատեսակներն իրենց էկոլոգիական, կենսաբանական և կլիմայական առանձնահատկություններով հարմարված կլինեն նշված տեղանքի բնակլիմայական պայմաններին և լիարժեքորեն կկատարեն իրենց սանիտարահիգիենիկ և գեղագիտական գործառույթները: Կանաչապատման նախագծում նաև հաշվի է առնվել այն հանգամանքը, որ բազմաբնակարան համալիրը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի հարավային արդյունաբերական գոտում, ուստի ընտրվել են էկոլոգիապես առավել կայուն ծառատեսակներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման 6-րդ և 7-րդ գլխի պահանջներին:

Տարածքի բարեկարգման և կանաչապատման նախագիծը հաստատվել է Երևանի քաղաքապետարանի կողմից (տես՝ [հավելված 7](#)), համաձայն որի առաջարկվում է տարածքում առկա թվով 8 թեղիները (որոնք նախագծով առաջարկվում է տեղափոխել կանաչապատ տարածք), փոխարինել առավել կայուն ծառատեսակներով՝ հացենի սովորական, սոսի թխկատերև կամ արևելյան:

Կիրականացվի նաև ոռոգման համակարգի կառուցում, որի համար որպես ոռոգման ջրի աղյուր կձառայի Մանթաշյան փողոցով անցնող Արտաշատի ջրանցքը: Ոռոգման ցանցը կիրականացվի պոլիէթիլենային խողովակներով՝ կից ցողացիքներով և փականներով, կտեղադրվի միջին հզորության ջրապոմպ, որը լիովին կբավարարի կանաչապատ տարածքի լիարժեք ոռոգման պահանջները:

Շինարարական աշխատանքների ժամանակ հանվող հողաբուսաշերտը (240սմ³, հզորությունը՝ 15-20սմ) նույնպես նախատեսվում է կուտակել և հետագայում օգտագործել կանաչ տարածքի բարեկարգման աշխատանքների համար:

Մինչ այդ հողաբուսաշերտը պետք է պահպանվի կույտերով, որոնց բարձրությունը և ձևը պետք է բացառեն դրանց էրոզիան: Միջազգային լավագույն փորձից ելնելով, հողաբուսաշերտի պահպանման համար սովորաբար օգտագործվում են 2 մ բարձրությամբ կույտեր՝ կողային շեպի 1:2 (25°) առավելագույն թեքությամբ:

Հողաբուսաշերտը պետք է պահպանվի այնպիսի տարածքում, որտեղ այն կարող է մնալ անխախտ վիճակում՝ չխանգարելով տվյալ տեղանքի գործունեությանը: Հողաբուսաշերտի պահման համար օգտագործվող տարածքը կարող է լինել ինչպես շինհրապարակի տարածքում, այնպես էլ նրանից դուրս: Պետք է ապահովվի, որպեսզի տվյալ տարածքը/տեղամասը լինի մաքուր բուսականությունից և շինարարությունից առաջացող ցանկացած թափոններից, որտեղ կբացառվեն էրոզիոն ցանկացած գործընթացները:

5.6 Օդային ավազան

Երևան քաղաքում օդային ավազանի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՇՄՄՏԿ ՊՈԱԿ) կողմից:

Համաձայն ՇՄՄՏԿ-ի 2020թ. ամսական հաշվետվությունների տվյալների, ուսումնասիրվող տարածքին ամենամոտ օդային ավազանի գետնամերձ շերտի մշտադիտարկումների ստացիոնար դիտակետում՝ դիտ. 8, որտեղ կատարվում են ինչպես ակտիվ, այնպես էլ ստացիոնար դիտարկումներ, օդային աղտոտիչների (փոշի, ծծմբի երկօքսիդ, ազոտի օքսիդներ ածխածնի մոնօքսիդ և գետնամերձ օզոն) միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ):

5.7 Ջրային ռեսուրսներ

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերով: Տեղամասում մինչ 37մ խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել, իսկ ըստ արխիվային նյութերի դրանք գտնվում ավելի քան 50 մ խորը հորիզոններում:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պարկտիկայի արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

▪ *Օդի աղտոտում*

Ծրագրի իրականացման ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներով: Հորատման, բեռնման և թափոնակույտման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 10^6 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէրոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.2

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 3 ամիս կամ

3 ամիս x 22 օր x 8 ժամ = 528 ժամ/շինարարություն:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է $G=38971\text{մ}^3 : 528=73,8 \text{ մ}^3/\text{ժամ}$ կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $73,8 \text{ մ}^3/\text{ժամ} \times 1.7 \text{ տ/մ}^3 = 125,5 \text{ տ/ժամ}$:

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.2 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 125.5 \times 10^6 / 3600 = 1,004 \text{ գ/վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$$1.004/\text{վ} \times 528/2 \times 3600 \text{ վ} / 10^6 = 1.9 \text{ տ/շին.ժամանակահատված}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Թույլատրված նորմերի

սահմաններում ներկայացված արտանետումների պահումը և հնարավոր վնասակար ազդեցությունները կբացատրվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում (տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն, 5.1 միջոցառումներ), մասնավորապես փոշու արտանետումները նվազենելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

▪ **Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում /տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն, 5.2 միջոցառումներ/ շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը չի գերազանցի ՀՀ-ի սահմանված նորմերը բնակելի համալիրի հարակից տարածքում, հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի և հասարակական շենքեր, բիզնեսի կետեր) հեռավորությունը շինտարածքից (մոտ 60-200մ): Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

▪ **Օդոտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օդոտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ է հասցվելու տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից:

▪ **Թափոնների և այլ նյութերի կառավարումը**

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա բնակելի համալիրի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի շին. թույլտվությանբ սահմանված վայրի և դրանում ներկայացված պահանջների համաձայն:

▪ **Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի (տես՝ ԲԿՊ, Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ լանջափտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պրակտիկայի արդյունքում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են դրական ազդեցություններ հիմնականում կապված.

- տվյալ տարածքի բնակելի և հասարակական պայմանների բարելավմամբ,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործմամբ և պահպանությամբ:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա համալիրի ապագա բնակիչներին իրենց բնակությունն ու ժամանցն անցկացնել առավել բարեկարգ և հաճելի միջավայրում:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է [հավելված 8](#)-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կիրականացվեն կանոնավոր մոնիտորինգ ([հավելված 9](#)), որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր:

Տեխնիկական վերահսկողությունը պետք է իրականացնի ամենօրյա ռեժիմով, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Նախատեսված գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների ծախսերի գումարային գնահատումը մոտ 28 մլն. ՀՀ դրամ է, որը կազմում է գործունեության ընդհանուր նախահաշվի արժեքի մոտ 1%-ը:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե ազդակիրների կողմից արձանագրվեն համապատասխան բնույթի զանգատներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

ԲԱՄ-ի հիմնական գործառույթները ևս ներկայացված են ԲԿՊ-ում:

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երևան քաղաքի Ֆրունզեի 10/4 հասցեում նախատեսված բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի շրջանակներում շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող գործունեության բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ:


Հանդիպումը տեղի է ունեցել ս.թ. դեկտեմբերի 18-ին, ժամը 12:00 Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դեկավայրի նստավայրի (ք. Երևան, Գարեգին Նժդեհի 26) կոնֆերենս դահլիճում, որին մասնակցել են նախագծի պատվիրատու ընկերության («Հայրենիք Շին» ՍՊԸ), նախագծող կազմակերպության («Տեք» ՍՊԸ) և

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև Շենգավիթ համայնքի բնակիչներ (ընդամենը՝ 17 մարդ): Հանդիպման արձանագրությունը և մասնակիցների ցուցակը բերված են [հավելված 13](#)-ում:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 7 օր առաջ հանդիպման վերաբերյալ մամրամասն տեղեկատվությունը հասանելի է եղել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020թ. դեկտեմբերի 2-ի համարում: Հանդիպման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել նաև Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում սկսած դեկտեմբերի 4-ից (<https://www.yerevan.am/am/announcement/hanrayin-k-nnarkman-hraver-94/>):

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական գնահատման հայտը և բնապահպանական կառավարման պլանը նախապես տրամադրվել են նաև Երևանի քաղաքապետարանի համապատասխան բաժնին:

Նկար 2: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 02.12.2020



Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական գնահատման հայտը և բնապահպանական կառավարման պլանը նախապես տրամադրվել են նաև Երևանի քաղաքապետարանի համապատասխան բաժնին:

Հանրային քննարկման ժամանակ իրականացված տեսաձայնագրությունը ներկայացվում է սույն նախնական գնահատման հայտին կից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. հունիսի 21:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- www.arlis.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 9 սեպտեմբերի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՀԱՅՐԵՆԻՔ ՇԻՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Շենգավիթ Մ. Ֆրունզեի փողոց 10/4

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի ներդրման պայմանագիր 03.09.2020թ թիվ 1631

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-011-0363-0128

Մակերեսի չափը (հա)՝ 0.405716

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Խառը կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 09092020-01-0025, գաղտնաբառ՝ D3G4CC1SBFDG

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Հայկ Գևորգյան
 Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
 անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 09092020-01-0025, գաղտնաբառ՝ D3G4CC1SBFDG

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Նախագծման թույլտվություն



Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆ Ք

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) N 01118-0741-9-658-1265 «09» «12» 2019թ.

Օբյեկտ *Քաղաքապետարանի բնակելի շենքի (բարձր դիվանդանային օբյեկտ, IV կարգերի)*
(օբյեկտի անվանումը, կառուցման, վերակառուցման, ուժեղացման, վերակառուցման, գործառնական նշանակության փոփոխություն, հավերժ բնորոշումը, հերթությունը, հիմնվածության աստիճանը (կառուցողի անունը))

Մեկ փուլով՝ «Աշխարհաբնային նախագիծ» **Նախագծային փաստաթղթերի մշակման համար**
(նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *Շենգավիթ վարչական շրջան, Մ. Ֆրունզեի փողոց 10/4*
(վարչական շրջանի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծանկագիրը)

Կառուցապատող *Վահե Չոբանյան (ք. Երևան, Կիկյան փողոց 15^ա շենք, բն. 10, հեռ.՝ 094 44 22 92)*
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջարկանքի տրամադրման հիմքը *Կառուցապատողի հայրը, անշարժ գույքի նկարագրի իրավունքների պետական գրանցման հ. 27122018-01-0454 վկայականը, Ֆրունզեի փողոցի՝ 8/8, 10/2, 10/5, 10/6 և Բայրուկովի փողոցի՝ 2, 8/1, 26, 28, 28/1, 30/1, 30/2, 30/3 հասցեներով ամրագրված բնակելի տների սեփականատերերի գրավոր համաձայնագրերը, էսթիմային նախագիծը:*
(կառուցապատման նպատակով ՀՀ տնտեսական ակտիվների գրանցման կարգի հոդվածի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անորոշ ժամանակահատվածում փաստաթղթեր)

Ն Ա Ն Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Վ Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ը
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է *Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, կադաստրային ծածկագիրը՝ 01-011-0363-0128:*
(հողամասի դիրքը ըստ պաշտպանական միջակայքում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը *0.405716 հա:*
(հողամասի սահմանները՝ կորդինատային նշանակումով, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը *Ազատ, կառուցապատված հողամաս:*
(նիւնիի բնութագրերը, շենքերի (այդ թվում՝ բաշտան ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկապետությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարելավումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները *Ֆրունզեի և Բայրուկովի փողոցներ:*
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մուտքային կետերը և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ *Կից գործող ինժեներական գծեր և հաղորդակցողներ:*
(ցանցաբաշտակառուցման, կոլեկտոր, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրաէներգիայի հաղորդակցության համակարգերը)

6. (*) Կից հողամասեր *Անհատական բնակելի տներ, ավտոբուսային:*
(կից հողագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) -----
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ -----
(տեղակայում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիսները)

Ն Ա Ն Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ծարտարապետահատակագծային պահանջներ *Մշակել բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի նախագիծ հ. 27122018-01-0454 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:*
(նկնելով ՀՀ օրենսդրության և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին, առկա բացառաշնչման իրադրային փաստաթղթերի դրույթներին կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպման (կազմակերպող) քաղաքաշինական միջավայրի պայմաններին, առաջարկություններ ճակատների մատչելիության, սանիտար, արտաքին, արտաքին տների, պատմամշակութային համաձայնությունների և գոտային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) -----

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) *Հարակից բնակելի շենքերից կառույցի վերգերնյա մասի հեռավորությունը նախատեսված գործող նորմատիվային պահանջների համաձայն:*

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) *Կառույցը նախատեսված 3 ստորգերնյա և մինչև 14 վերգերնյա հարկերով: Կառույցների առավելագույն բարձրությունները նախագծային զրոյական նիշերից ընդունել 48.0մ: Հնարավոր է մասնակի ավելի բարձր ծավալների շեշտադրում տրամադրված սպասարկող աստիճանավանդակների և վերելակների հորանների համար:*

9.4. կառուցապատման խտության գործակիցը -----
(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը *Մինչև 40%:*
(կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.6. կանաչապատման տոկոսը *Սակառուցման, առօրյա պարարտության և ճանապարհների համար մինչև 20%:*
(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.7. այլ պահանջներ *40% և ավելի*

- Սույն թույլտվության 20-րդ կետով ամրագրված պահանջները ապահովելու նպատակով՝ շինարարական հրապարակի կազմակերպման նախագծում, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման պարագայում նշել դրանց մակերեսը:
- Նախագծով ապահովել հարակից տարածքների շահագործման այդ թվում արևահարման ռեժիմի ազդեցության և նորմատիվային պահանջները:
- Հարակից գոտային լուծումները մշակել համաձայն պարամիտրային առաջարկների՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները:
- Կառույցներում կենտրոնացված օդափոխության համակարգ չնախատեսելու դեպքում, կառույցի արտաքին տեսքը և ճարտարապետական հորինվածքը հեղափոխ խաթարումներից զերծ պահելու համար, նախատեսված ջրհարկված համակարգ՝ փեղային օդափոխիչների փեղադրման համար:
- Նախագծով լուծել ավտոտրանսպորտի անվտանգ ելումուտի և բացօթյա ավտոկայանման խնդիրները:
- Տանիքները նախատեսել կազմակերպված ջրահեռագմամբ:

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը	-----
11. Ստորգետնյա, կիսանկողի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	Նախարեսել եռահարկ ստորգետնյա ավրոկանգառ:
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից փրված փեխնիկական պայմաններին համաձայն:
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում	Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատա կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	----- (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված եզակետային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	-----
12.6. արքահանություն	-----
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	Կազմակերպել ջրահեռացում: (ռեիլիի կազմակերպման, ցրտեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	Մշակել փարածքի բարեկարգման, կանաչապարսպի և ուղղաձիգ հարկազանցման նախագիծ, հնարավոր է նախարեսել ճարտարապետական փորձը ձևեր: (անդաճֆոսային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապարսպ, ճարտարապետական փորձ ձևեր, ցանկապատ, գրվազ և այլն)
15. Շինարարական նյութեր	• Երկաթբետոն, սրբաքար և կոպրաքար քար, փայտ, մեղաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապարսպ բարձրորակ նյութեր: (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ ստանդարտները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	----- (արտակարգ իրավիճակներում մարդկանց, օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ	Ապահովել հակահրդեհային նորմարիվ պահանջները, ապահովել հրշեջ հիդրանտների առկայությունը: (հակահրդեհային ակտիվության սպահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	Նախարեսել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի փեխաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապարասխան:
19. Շրջակա միջավայրի պահպանում	• Նախարեսել շրջակա միջավայրը վրանգավոր ազդեցությունից բացառելու համապարասխան միջոցառումներ: • Ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և փեխնածին ծագման գործոններին սահմարական կանոններով և նորմերով, շինարարական նորմերով ներկայացվող նորմարիվ պահանջները: (շրջակա միջավայրը վրանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ. 286 որոշմամբ հասարակած կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ. 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները: 111. Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությունը ստանալու է 2 աստի ժամկետով, եթե սույլ օբյեկտի շինարարության համար թույլտվությունը ընդգրկում է անհատական կառուցվածքի փոխարինումը մարմնի ԱԼԻԴՆ 1.04.03.85՝ (Շինարարությունների շենքերի և կառուցվածքների շինարարության ստուգողական նորմերը) զերտեսնելուց անվճար սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն: 112. Գրառություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (մեղաքայլ՝ քաղցրանակ), վերակառուցման, ուժեղացման և բարելավման աշխատանքների համար թույլտվությունը ստանալու է նախագծային փաստաթղթերով տվյալ օբյեկտի շինարարության (բաժնեմաս կամ սպանդանոսմաս) ստուգողական նորմերով հաշվարկված ժամկետով: (ստանդարտները շինարարության հետ կապված անթարեկապատ ազդեցության բացառման, քաղաքային տեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջարկագրի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	Երկու փուլ: (Էշվում են առաջարկագրի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)
Լ Բ Ա Յ ՈՒ Ց Ի Չ Դ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Բ Ը	
22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝ պետական համալիր փորձաքննություն: (ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)
23. Միջանկյալ համաձայնեցում	ՀՀ քաղաքաշինության, փեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի և ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ: (Փոստային մարմնի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շահագրգիռ մարմինների հետ Եզրգային նախագծի նախնական համաձայնեցում, էշվում է նաև առաջարկագրի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ):
24. Հասարակական քննարկումներ	----- (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)
25. Համաձայնեցումներ	• Երևանի քաղաքապետի հետ: • Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել փվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ: (Էշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)
26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում	Բնակարանների սպասարկման համար առաջին հարկում նախարեսել բաժանորդային փոստարկղերի տեղադրման համար համապարասխան փարածքներ:
27. Այլ պայմաններ	Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության տեսչական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հասարակելու մասին» հ. 128-Ն հրամանով հասարակած դրույթներին:


 ստորագրությունը
 Կ. Տ.



Երևանի քաղաքապետ՝
Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կարգավոր՝ Շ. Մախաչյան

2.2. Տեխնիկական պայման 'Վեոլիա Ջուր

OLIA

«Հաստատում եմ»

Արտադրատեխնիկական բաժնի պետ՝

Ա.Մարտիրոսյան

«30» 10 2020թ.

Տեխնիկական պայման ՎՋ 407 /2020 (Ջրամիացման և/կամ՝ ջրահեռացման նախագծման)

ք.Երևան Մ.Ֆրունզեի փ. 10/4
/Տարածքի հասցե/

«Հայրենիք Շին»ՍՊԸ
/Իրավունքի ստան, ազգանուն/

093151616
/Հեռխոստմամբ/



Սյ. Հավակարգ	Ջրամատակարարում	Ջրահեռացում	Հեղեղատար	Հրահրման տեղ
Սյ. Կոմունիկացիայի գտնվելու վայրը	Տարածքից մոտ 65մ հեռավորությամբ, մինչև պոմպակայան մտնելը	Տարածքից մոտ 35մ հեռավորությամբ		
Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը	d=250մմ, P=1.8մթն. պող.	d=300մմ		
Միացման կետի տեղը	Տարածքից մոտ 65մ հեռավորությամբ, մինչև պոմպակայան մտնող ջրագծից	Տարածքից մոտ 35մ հեռավորությամբ անցնող կոյուղագծին		
Միացման տրամագիծը	Համաձայն նախագծի			
Ջրաչափի տրամագիծը, դասը և տիպը				
Այլ պահանջներ	Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր	Կոյուղագծի միացման կետում կառուցել դիտահոր	Համաձայն ՀՀՇՆ. 40-01.01-2014թ. 307 կետի համաձայն	Հիդրանտի տեղադրման կետում կառուցել դիտահոր
Ջրամատակարարման գրաֆիկ	Շուրջօրյա			

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին : Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին :

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարացման մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա :

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց թույլտվությունները և/ կամ համաձայնությունները : Անձրևաջրերի արտաքին կոյուղու բացակայության դեպքում անձրևաջրերի հեռացման ներքին ցանցի թողարկների ջրերը պետք է հեռացվեն շենքի մոտ նախատեսվող առվակներով (բաց թողարկ), ընդ որում, պետք է նախատեսել շենքի մոտ հողի մակերևույթի ողողումը բացառող միջոցառումներ :


«Հարավ» տեղամասի պետ՝



Ա. Բուդաղյան

Ինժ. խմբի պատասխանատու՝

Ա. Կարապետյան


 Կատ. Մանուկյան
 Ա. Աղաբաբյան




ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԽԵՄԱՆԵՐ

ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԽԵՄԱ




-3.600 ՆԻՇՈՎ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ԶՈՆԱՎՈՐՈՒՄ



- Ավտոկայանի ճանապարհ
- Ավտոկայանատեղի
- Ընդհանուր օգտագործման տարածք
- Պահեստային տարածք
- Տեխնիկական սպասարկման տարածք

-6.900 ՆԻՇՈՎ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ԶՈՆԱՎՈՐՈՒՄ Մ1:200




- Ավտոկայանի ճակատաբախ
- Ավտոկայանատեղի
- Ընդհանուր օգտագործման տարածք
- Պահեստային տարածք
- Տեխնիկական սպասարկման տարածք

-10.200 ՆԻՇՈՎ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ԶՈՆԱՎՈՐՈՒՄ Մ1:200




- Ավտոկայանի ճանապարհ
- Ավտոկայանատեղի
- Ընդհանուր օգտագործման տարածք
- Պահեստային տարածք
- Տեխնիկական սպասարկման տարածք

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԽԵՄԱ



Շ.Ի.Ն. ԶՐԱՊՈՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ Ս 1:300



ՏՐՈՒՆ ԼԱՎԻՏ ԻՍԱԽԱՅԱՆ *Մանուկ*
 ԱՆԻՍԻՄՈՒՆԻ Ա. ԿԱՌՈՒՑՄԱՆ *Անկր*
 ԱՆԽԱԳՑ. Ա. ԻՍԱԽԱՅԱՆ *Մանուկ*

ԲԱԶՄԱՅԵՐՈՒԿԵԹՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՆԱԽԱԳԾ՝
 ՇԻՆԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԱՆ ՄԱՍ
 ՀԱՅՏԵ՛ ՇԵՆԱԿԻԹ Վ/Շ. ԶՐԱՊՈՐԱԿ Փ. 10/4
 ՊԱՏԻՐԱՏՈՒՄ "ՀԱԹՐԵՆԻԷ" ՍՊԸ
 Շ.Ի.Ն. ԶՐԱՊՈՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ
 ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
 ՓՈՒԼՈՒՄ Ս 1:300
 ՓՈՒԼ ԹԵՐԹ ԹԵՐԹԵՐ
 ԱՆ ՇԿ - 13 25
 «ԼԱՆԱ - ԱՏՈՒՐԻԱ» ՍՊԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)

Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է նախատեսվող գործունեության արժեքի մոտ 1,5%
Ն Ա Ն Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Փ ՈՒ Լ				
1. Հանրային լուսմներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են նախատեսվող գործունեության իրականացման ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	1.1. Նոր կցակառույց մասնաշենքի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը անցկացրվել է ս.թ. դեկտեմբերի 18-ին՝ ժամը 12:00-ին Երևանում (հասցե՝ Գարեգին Նժդեհի 26): Հանրային քննարկման հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի դեկտեմբերի 2-ի համարում: 1.2. Հանրային լուսմներում ներկայացվել են նաև Բողոքների արձագանքման մեխանիզմը (ԲԱՄ), որի ներդրումը կիրականացվի Պատվիրատուի կողմից:	«Հայրենիք Շին» ՍՊԸ, «Տեք» ՍՊԸ «Հայրենիք Շին» ՍՊԸ,	
2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ բնակելի համալիրի շինարարության և շահագործման փուլերում:	2.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:	«Հայրենիք Շին» ՍՊԸ,	
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ց Ա Ն Փ ՈՒ Լ				
Առողջություն և աշխատանքային անվտանգություն				
3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և բնակելի համալիրի կառուցման բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշաճ կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է:	3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: 3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ): 3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն): 3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը	Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու	

		<p>և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում:</p> <p>3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանական միջոցներով:</p> <p>3.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել:</p> <p>3.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում:</p> <p>3.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Հանրության հետ կապ և հանրային իրազեկում				
<p>4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ</p>	<p>Ազդակիրների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ:</p>	<p>4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ ազդակիրները կտեղեկացվեն ԲԱՄ-ի մասին, համաձայն որի նրդրման.</p> <p>Ա: Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների/ էլեկտրոնային հասցեների մասին:</p> <p>Բ: Շին հրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների գրանցամատյան (բողոքի գրանցման ձևը՝ տես Հավելված 10-ում) և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին՝ հարցի լուծման վերաբերյալ:</p>	<p>«Հայրենիք Շին» ՍՊԸ, Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Շրջակա միջավայրի պահպանություն				
<p>5. Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ</p>	<ul style="list-style-type: none"> Առևտրի կենտրոնին հարակից տարածքում առկա մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի և այլ հանրային կառույցների վրա գնահատվում են. 	<p>5.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում</p> <p>5.1.1. Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում:</p> <p>5.1.2. Օդի որակի չափագրումների իրականացում ըստ</p>	<p>Կապալառու</p> <p>«Հայրենիք Շին» ՍՊԸ</p>	

	<p>1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը;</p> <p>2. Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճի հետևանքով ազդեցությունը:</p>	<p>անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում:</p> <p>5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար;</p> <p>5.1.4. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով:</p> <p>5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>5.2.1. Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափազրույթներ կիրականացվեն ըստ անհաժեշտության՝ ազդակիր անձանց կողմից բողոքի դեպքում:</p> <p>5.2.2. Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին:</p> <p>5.2.3. Մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում:</p> <p>5.2.4. Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակալներով, ապահովում:</p> <p>5.3. Բուսականության պահպանության կառավարում</p> <p>5.3.1. Հնարավոր վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումների իրականացում՝ ուղղված դրանք պաշտպանությանը շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից (պաշտպանիչ պաստառներ, ջրցանում) և հնարավոր այլ ազդեցություններից:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>«Հայրենիք Շին» ՍՊԸ</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Շինարարական հրապարակի կազմակերպում				
<p>6. Շինհրապարակի կազմակերպում</p>	<p>Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից ազդեցություններ</p>	<p>6.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում:</p> <p>6.2. Շին հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	

		<p>6.3. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>6.4. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախագգուշացնող նշաններ:</p>	Կապալառու	
Երթևեկության կառավարում				
7. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ	<p>Երթևեկության հնարավոր ազդեցություններն են.</p> <ul style="list-style-type: none"> • Երթևեկության խափանումներ • Երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ • փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ • հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում • շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհներին վնաս 	<p>7.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով;</p> <p>7.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը:</p> <p>7.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար նվազագույն խոչընդոտներով:</p> <p>7.4. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>7.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:</p> <p>7.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>7.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</p> <p>7.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</p>	Կապալառու	
Արտակարգ իրավիճակների կառավարում				
8. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների	<p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի</p>	<p>8.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <p>8.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի</p>	Կապալառու	

<p>դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)</p>	<p>թափանցում հողի մեջ:</p>	<p>արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</p> <p>8.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին;</p> <p>8.4. Վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով:</p> <p>8.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>8.6. Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</p> <p>8.7. Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>8.8. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p> <p>8.9. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</p>	<p>Կապավառու</p> <p>Կապավառու</p> <p>Կապավառու</p> <p>Կապավառու</p> <p>Կապավառու</p>	
--	----------------------------	---	--	--

		8.10. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն (Հավելված 12):		
Թափոնների և նյութերի կառավարում				
9. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ	Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:	<p>9.1. Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթնեկության խոչընդոտները կանխելու համար;</p> <p>9.2. Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր:</p> <p>9.3. Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում:</p> <p>9.4. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>9.5. Կենցաղային աղբի հավաքումը և պարբերաբար հեռացումը անհրաժեշտ է իրականացնել թույլատրված աղբավայրում:</p> <p>9.6. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին.աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:</p>	Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու	
Աշխատողների վերապատրաստում				
10. Աշխատողների վերապատրաստում	Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:	<p>10.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն;</p> <p>10.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողկարգի մասին;</p>	«Հայրենիք Շին» ՍՊԸ, Կապալառու Կապալառու	
Աշխատանքային տեղամասի վերականգնում և բարեկարգում				

<p>11. Շինհրապարակի վերականգնում և տարածքի բարեկարգում</p>	<p>Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը, թափոնները և այլն:</p>	<p>11.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն:</p> <p>11.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;</p> <p>11.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը;</p> <p>11.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Հ Ե Տ Շ Ի Լ Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն Փ Ո Ի Լ				
<p>12. Թերությունների վերացման աշխատանքներ</p>	<p>Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները</p>	<p>12.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատճառ իրականացումը:</p>	<p>Կապալառու</p>	

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխան ատուներ	Մոնիտորինգի հաճախակա- նություն
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ						
1. Հանրային լուսմներ և կապը հանրության հետ	- Հանրության տեղեկացվա- ծությունը շինարարության փուլերի վերաբերյալ - Ազդակիր կողմերի տեղե- կացվածությունն ԲԱՄ-ի վերաբերյալ	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգումներ, շին - տուգայցեր տեղամասեր, - հանրային լուսմներ, - բողոքների գրանցամատ- յանի ստուգումներ	Բողոքներին արձա- գանքման մեխանիզմն իրականացվել է բոլոր պահանջներին համապատասխան	«Հայրենիք Շին» ՍՊԸ, Կապալառու	Հանրային լուսմները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ, ԲԱՄ-ը
2. Շրջակա միջա- վայրի պահպա- նություն	- փոշու և այլ օդի աղտոտիչ- ների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	շին. հրապարակ,	- ակնադիտական ստու- գումներ՝ շինհրապարակ ստուգայցերի միջոցով, - բողոքների գրանցա- մատյանի գրառումների ստուգում; - ըստ անհրաժեշտության՝ փոշու, աղմուկի, թրթռում- ների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների ատկայության դեպքում:	- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մա- կարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում	«Հայրենիք Շին» ՍՊԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Շին աղբի և թա- փոնների տեղա- դրման վայրեր	- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևա- նությանը բնակ- չությանը պատ- ճառված անհար- մարություններ:	- փաստաթղթերի ստուգում	- Շին աղբի և թափոն- ների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կող- մից թույլատրված և տարածքին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	«Հայրենիք Շին» ՍՊԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
4. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և	Ճանապարհների օգտագործում սարքավորումնե- րի և նյութերի տեղափոխության համար,	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր	- Երթևեկության և մոտեց- ման ուղիների համա- պատասխանությունը, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու	«Հայրենիք Շին» ՍՊԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

	անվտանգության հարցերը, ճանապարհներին և այլ կառույցներին պատճառվող վնասներ:	շինհրապարակի մոտեցման մուտքերը		կարևորությունը		
5. Թափոնների և շին. նյութերի կառավարում	- Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր	- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:	«Հայրենիք Շին» ՍՊԸ, Կապալառու	
6. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների, սանիտարահիիենիկ կանոնների պահպանում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	- շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Տեղամասեր կատարած ստուգայցեր	- Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին: - Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրություն պահանջների: - Շինհրապարակի վերականգնման և բարեկարգ-	- Պահպանված են շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնները, - ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից,	«Հայրենիք Շին» ՍՊԸ, ՍՊԸ, Կապալառու	

			ման պլանն առկա է: - Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:			
Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն (Թ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն) Փ ՈՒ Լ						
7. Թերությունների վերացման աշխատանքներ	- Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	բնակելի համալիրի տարածքի սահմաններում	Բողոքներ զգայուն ընկալիչների կողմից	Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռումների, օդի որակի չափազանցումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին:	«Հայրենիք Շին» ՍՊԸ, Կապալառու	
8. Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Բարեկարգման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	«Հայրենիք Շին» ՍՊԸ	

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

Դիմումը ներկայացնելու ամիս/ ամսաթիվը	Դիմողի անուն/ ազգանունը	Դիմողի կարգավիճակը (բնակիչ, ձեռնարկատեր, այլ)	Բողոքի/առաջարկի բովանդակությունը	Դիմողի ստորագրությունը	Դիմումի կարգավիճակը (լուծված/ ընթացքում/ փոխանցված Պատվիրատուին/ չլուծված)

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՅՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻ ՁԵՎ

Մեղմացնող միջոցառումների և ստուգայցի մոնիտորինգի մասին հաշվետվություն N

Նախագիծ՝ _____

Ստուգման տեղամաս՝ _____

Կապալառու՝ _____

Եղանակային պայմանները ստուգայցի պահին՝ _____

Ստուգայցն իրականացրել է: Անուն/ ազգանուն/ պաշտոն՝ _____

Ամսաթիվ՝ _____

Մոնիտորինգի ստուգայցն իրականացվել է Կապալառուի ներկայացուցչի մասնակցությամբ: Անուն/ ազգանուն/ պաշտոն

<i>Նախագծման փուլ</i>						
Շինարարական գործողություն		Մեղմացնող միջոցառում (ըստ ՆԳՀ/ԲԿՊ)	Մեղմացման միջոցառում իրականացված է (Այո/ Ոչ/ Ոչ)	Պատասխանատու	Ուղղիչ գործողության պահանջ (ՈւԳՊ) այդ թվում վերջնաժամկետ	Նախորդ ՈւԳՊ կարգավիճակը (ուղղված է/ պահավող միջոցառումներ)
Նախնական գնահատման հայտ (ՆԳՀ)		Բնապահպանական փորձաքննության եզրակացությունն առկա է		«Հայրենիք Շին»		
Շին աղբի և թափոնների տեղադրման վայր		Թափոնների և շինարարական աղբի տեղադրման թույլտվությունն առկա է		«Հայրենիք Շին»		
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ						
Շին հրապարակ: ընդհանուր պահանջներ						
Բնապահպանական կառավարում. բնապահպանական թիմ, առողջություն և աշխատանքի անվտանգություն, արտակարգ իրավիճակներ, բողոքների արձագանքման մեխանիզմ						

Շինարարական գործողություն		Մեղմացնող միջոցառում (ըստ ՆԳՀ/ ԲԿՊ)	Մեղմացման միջոցառում իրականացված է (Այո/ Ոչ/ Ոչ)	Պատասխանատու	Ուղղիչ գործողության պահանջ ՈւԳՊ այդ թվում վերջնաժամկետ	Նախորդ ՈւԳՊ կարգավիճակը (ուղղված է/ այլ միջոցառումներ են պահանջվում)
Բնապահպանական պատասխանատուներ						
Բոլոր գործողությունները	1.	Բնապահպանական/ առողջության և աշխատանքի անվտանգության պատասխանատուն նշանակված է և ներկա է շին հրապարակում:				
Կառավարման միջոցառումներ						
Բոլոր գործողությունները	2.	կառուցապատման սահմաններից դուրս այլ տարածքների օգտագործումը բացառված է				
Առողջություն և աշխատանքի անվտանգություն						
Բոլոր գործողությունները	3.	Նախագուշացնող նշաններն ու տարածքի ցանկապատումն ապահովված				
Հողային աշխատանքներ	4.	Բաց հորերի հետլիցքն իրականացված է կարճ ժամկետներում:				
Բոլոր գործողությունները	5.	Կողմակի անձանց մուտքը շին հրապարակ հուսակլի արգելափակված է				
Բոլոր գործողությունները	6.	Աշխատակիցներն ապահովված են արտահագուստով (և կրում են դրանք), իսկ ըստ անհրաժեշտության նաև ԱՊՄ-ով				
Բոլոր գործողությունները	7.	Կառուցապատումն ու տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների մասին տեղեկատվական ցուցանակը տեղադրված է:				
Բոլոր գործողությունները	8.	Աշխատողներն ապահովված են անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմաններով. խմելու և կենցաղային կարիքների ջուր, ընդմիջման և հանգստի հարմարություններ, գուգարան և այլն:				
Բոլոր գործողությունները	9.	Առաջին բուժօգնության միջոցներն առկա են և հասանելի բոլոր աշխատողների համար:				
Բոլոր գործողությունները	10.	Կրակմարիչն առկա է, գտնվում է սարքին վիճակում և աշխատողների համար հասանելի վայրերում:				
Արտակարգ իրավիճակների պլան						
Բոլոր գործողությունները	11.	Արտակարգ իրավիճակների պատասխանատու անձը ներկա է շին հրապարակում:				
Բոլոր գործողությունները	12.	Արտակարգ իրավիճակների պատասխանատու կոնտակտային տվյալներով առկա է, թարմացված է և փակցված է տեսանելի				

		վայրում				
Բոլոր գործողությունները	13.	Պատահարների մասին հաշվետվություն վարվում է:				
<i>Բնապահպանական/ աշխատանքի անվտանգության դասընթացներ</i>						
Բոլոր գործողությունները	14.	Աշխատողներն ուսուցանված են ՆԳՀ/ ԲԿՊ-րի մասին աշխատանքը սկսելուց առաջ:				
Բոլոր գործողությունները	15.	Աշխատողներն ուսուցանված են արտակարգ իրավիճակներին արձագանքելու ընթացակարգերի մասին աշխատանքը սկսելուց առաջ:				
Բոլոր գործողությունները	16.	Աշխատողները ստացել են աշխատանքի անվտանգության հրահանգավորումը աշխատանքը սկսելուց առաջ և գրանցամատյանում առկա են դա փաստող գրառումները:				
<i>Շին հրապարակի մաքրություն</i>						
Բոլոր գործողությունները	17.	Շին հրապարակը և մոտեցնող հասարակական ճանապարհները պահվում է մաքուր վիճակում և զերծ է շին և կենցաղային աղբից				
Բոլոր գործողությունները	18.	Տեղադրված են աղբամաններ կենցաղային աղբի հավաքման համար				
<i>Կապր հանրության հետ և բողոքների արձագանքման մեխանիզմ՝ բնապահպանական հարցեր</i>						
Բոլոր գործողությունները	19.	Տեղի են ունեցել շին աշխատանքների, բնապահպանական ազդեցությունների և մեղմացնող միջոցառումների մասին հանդիպումներ ազդակիր անձանց հետ:				
Բոլոր գործողությունները	20.	Բողոքների գրանցամատյանը առկա է շին հրապարակում և վարվում է: Նախորդ ստուգայցի ժամանակ նկատված բողոքները լուծված են:				
<i>Բնապահպանական պարամետրեր. Փոշու հսկողություն</i>						
Հողային աշխատանքներ, նյութերի մատակարարում, առաջացած շին աղբի հեռացում	21.	Բեռնատարներն փոխադրումներն իրականացնում են փակ ծածկով:				
	22.	Շին հրապարակը պարբերաբար ջրցանվում է:				
	23.	Սարքավորումներն ու մեքենաներն ապահովված են արտանետվող գազերի կլանիչներով:				
<i>Աղմուկի մակարդակի հսկողություն</i>						
Շին տեխնիկայի	24.	աղմուկի մակարդակը գտնվում է մոտակա				

աշխատանքներ		ընկալիչների համար ընդունելի սահմաններում				
	25.	Սարքավորումներն ապահովված են սարքին խլացուցիչներով				
	26.	Աղմակահույց աշխատանքներն իրականացվում են օրվա ցերեկային ժամերին				
<i>Թրթռումների մակարդակի հսկողություն</i>						
Շին տեխնիկայի աշխատանքներ	27.	Թրթռումների ուժգնությունն ու ժամանակահատվածը հսկվում են				
<i>Կեղտաջրերի հսկողություն</i>						
Հեղուկ նյութերի օգտագործման աշխատանքներ	28.	Արտահոսքերը կառավարվում են պատշաճ ձևով				
Հողային աշխատանքներ, նյութերի մատակարարում, առաջացած շին. աղբի հեռացում	29.	Ջրահեռացման համակարգերը և ջրային այլ ուղիները խցափակված չեն նստվածքներով և պաշտպանված են				
Մեքենաների գործածությամբ աշխատանքներ	30.	Բեռնատարների անիվները մաքրվում են մինչև շին հրապարակի լքելը և հասարակական ճանապարհներ մուտք գործելը				
Հողային աշխատանքներ	31.	Հողային հանույթը հեռացված է շինհրապարակից կամ կանոնավոր կուտակված է դրա համար հատկացված կուտակման վայրում				
<i>Շինարարական աղբի և թափոնների կառավարում</i>						
Շին աղբի հեռացում	32.	Շին աղբը և թափոնները տեղադրված են սահմանված վայրում				
Հողային աշխատանքների իրականացում	33.	Անվտանգ թափոնները (հողային հանույթը, քարերը, բետոնե և մետաղական մասերը, այլ) կառավարվում են ԲԿՊ համապատասխան				
Վառելիքի, քսանյութերի, յուղի օգտագործմամբ գործողություններ	34.	Հեղուկ թափոններն ու արտահոսքերը, աղտոտված հողը կառավարվում են ԲԿՊ համապատասխան				
<i>Տարածքի վերականգնում</i>						
Բոլոր գործողությունները	35.	Տարածքը մաքրված է բոլոր թափոններից և շինարարական աղբից				
Բոլոր գործողությունները	36.	Տարածքից հեռացված են բոլոր տեխնիկական միջոցները, ապամոն-տաժված ժամանակավոր օժանդակ կառույցները				
Բոլոր գործողությունները	37.	Հարակից հասարակական ճանապարհները վերականգնված և մաքրված են				

ՀԱՎԵԼՎԱԾ 12. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Պատահարի ամիս/ ամսաթիվ	Պատահարի նկարագրություն	Պատահարի վերացման միջոցառումներ	Միջոցառումների ժամկետներ և պատասխանատու	Պատահարի վերացման կարգավիճակ

**ՀԱՎԵԼՎԱԾ 13. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ**

Արձանագրություն

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մ. Ֆրունզեի փողոցի 10/4 հասցեում
բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման վերաբերյալ
(1-ին հանրային քննարկումներ)

ք. Երևան

18.12.2020թ.

2020թ. դեկտեմբերի 18-ին ժ.12:00-ին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի
դեկավարի աշխատակազմի շենքում (հասցե՝ ք. Երևան, Գարեգին Նժդեհի 26), տեղի
ունեցավ Ֆրունզեի փ. 10/4 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման
նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի
վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

Հանրային քննարկմանը մասնակցել են Երևանի քաղաքապետարանի
բնապահպանության վարչության, նախաձեռնող («Հայրենիք Շին» ՍՊԸ), նախագծման
խորհրդատու («Տեք» ՍՊԸ) ընկերությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Երևան
քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչներ և բնակիչներ
(ընդհանուր 17 մասնակից):

Նախագծի ներկայացում և քննարկում

Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետի տեղակալ
Գևորգ Նավասարդյանը հանդես եկավ բացման խոսքով, ողջունեց հանդիպման
մասնակիցներին և ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը: Նա նշեց, որ
«Հայրենիք Շին» ՍՊԸ նախաձեռնությամբ մշակվել է «Երևան քաղաքի Ֆրունզեի փ. 10/4
հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագիծ», որը համաձայն
ՀՀ օրենսդրության ենթակա է բնապահպանական փորձաքննության: Նա ասաց, որ ՀՀ
օրենսդրությամբ սահմանված կարգով այսօր առաջին հանրային քննարկումն է, որի
վերաբերյալ հայտարարությունը դեկտեմբերի 4-ից տեղադրված է եղել նաև Երևանի
քաղաքապետարանի պաշտոնական կայքում:

ՇՄԱԳ փորձագետ Ք. Սահակյանը ներկայացրեց հանրային քննարկման նպատակը,
որը նախատեսվող գործունեության մանրամասների ներկայացումն է և նախատեսվող
գործունեության և շրջակա միջավայրի վրա նրա հնարավոր ազդեցությունների
վերաբերյալ շահագրգիռ հանրության արձագանքի ստացումը:

Նա ներկայացրեց ընդհանուր տեղեկատվություն նախատեսվող գործունեության
տեխնիկական ցուցանիշների, համապատասխան կոնստրուկտորական
առանձնահատկությունների և ճարտարապետական լուծումների վերաբերյալ: Այնուհետև
ներկայացվեց նախագծի շրջանակներում իրականացրած բնապահպանական և
սոցիալական հնարավոր ազդեցությունների ուղղությամբ իրականացված
ուսումնասիրությունների մանրամասները: Ք. Սահակյանը նշեց, որ բացահայտվել են
ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող դրական և բացասական
ազդեցությունները և առաջարկվել դրանց ուղղությամբ անհրաժեշտ մեղմացնող
միջոցառումները: Նա ներկայացրեց բնապահպանական կառավարման պլանում
ամփոփված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց
մեղմացման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները, որոնք ներառում են նաև
հնարավոր բողոքների արձագանքմանն ու լուծմանն ուղղված միջոցառումներ:

Նշվեց, որ ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող աշխատանքները չեն թողնի բացասական ազդեցություն տարածքի շրջակա միջավայրի վրա, քանի որ գործունեությունն իրականացվելու է քաղաքային միջավայրի արդեն ուրբանացված տարածքում:

Որոշակի բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում (օր.՝ փոշի, աղմուկ, շինարարական և կենցաղային աղբ), որոնք սակայն կլինեն սահմանափակ, տեղային, կունենան ժամանակավոր բնույթ և կլինեն կառավարելի:

Ք. Սահակյանի կողմից կարևորվեց այն հանգամանքը, որ նախագծային լուծումներում հատուկ ուշադրություն է դարձվել սահմանափակ կարողություններով մարդկանց հարմարավետության ապահովմանը՝ թեքահարթակների, հաշվանդամների համար հատուկ ավտոկայանատեղիների առկայություն և այլն:

Ուշադրության արժանացավ նաև այն, որ բնակելի համալիրի տանիքին նախատեսվում է տեղադրել արևային վահանակներ, իսկ գործունեության տարածի շուրջ 40%-ը նախատեսվում է կանաչապատել (այդ թվում՝ տանիքը): Նա նշեց, որ այդ նպատակով իրականացվել է տարածքի բարեկարգման և կանաչապատման նախագիծը, որն արդեն հաստատվել է Երևանի քաղաքապետարանի կողմից: Ամփոփելով իր ելույթը՝ Ք.Սահակյանը նշեց, որ նախատեսվող աշխատանքների իրականացմամբ կստեղծվեն պայմաններ տվյալ տարածքի հետագա պահպանություն և կայուն օգտագործման համար, ինչը հնարավորություն կտա համալիրի ապագա բնակիչներին իրենց բնակությունն ու ժամանցն անցկացնել առավել բարեկարգ և հաճելի միջավայրում:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

N	Հարց	Պատասխան
1	<p><u>Արմեն Ափոյան, Մամվել Ազնաուրյանը Շենգավիթ վարչական շրջանի բնակիչներ</u></p> <p>Ցուցադրված նյութը նայելով մեզ համար այդքան էլ հստակ չի, թե կոնկետ որ տարածքի կառուցապատման մասին է խոսքը: Ճիշտ է նախաձեռնությունը լավն է, սակայն կուզենաինք հասկանալ, թե կոնկրետ ո՞ր տարածքի մասին է խոսքը:</p>	<p><u>Քրիստինե Սահակյան (ՇՄՍԳ փորձագետ)</u></p> <p>Մենք բերել ենք գործունեության տարածքի և այնտեղ նախատեսվող գործունեության ճարտարապետական լուծումների մանրամասն գծագրերը: Խնդրեմ, այն փոխանցում եմ ձեզ ավելի մանրամասն ուսումնասիրելու համար: Գծագրերում գործունեության տարածքն առանձնացված է մուգ գույնով: Ես միայն հավելեմ, որ համաձայն անշարժ գույքի սեփականության վկայականի, տվյալ 4076 մ² տարածքը պատկանում է «Հայրենիք Շին» ՍՊԸ-ին:</p> <p><u>Մամվել Ազնաուրյանը ավելացրեց.</u></p> <p>Ես այժմ հասկացա, թե կոնկրետ որ տարածքի մասին է խոսքը: Ուղղակի 2 ավտոկայանատեղիների հետ կապված որոշակի դատական գործընթացներ են ընթանում: Հիմա մենք բոլորս էլ հասկացանք, որ այդ գործընթացները ձեր գործունեության տարածքի հետ բոլորովին կապ չունեն:</p> <p><u>Արթուր Մնացականյանը («Հայրենիք Շին» ՍՊԸ)</u></p>

		<p><u>հավելեց.</u> Ես միայն ավելացնեմ, որ հանդիսանում եմ նախատեսվող գործունեության հողատարածքի սեփականատերը և մինչ օրս ես որևէ ծանուցում չեմ ստացել:</p>
2	<p><u>Արմեն Ափոյան, Շենգավիթ վարչական շրջանի բնակիչ</u></p> <p>Մի խնդրանք՝ մենք միայն վերջերս ենք տեսել այս հանդիպման վերաբերյալ հայտարարությունը՝ փակցված մեր շենքի մուտքին: Արդյո՞ք հնարավոր չէ նման լուսմները կազմակերպել ոչ աշխատանքային՝ շաբաթ-կիրակի օրերին, քանի որ նման հարցերը բոլորիս համար հետաքրքիր են և այդ դեպքում ավելի շատ մարդ կկարողանան մասնակցել:</p>	<p><u>Գևորգ Նավասարդյան (Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ).</u> Երևանի քաղաքապետարանը վարչական շրջանի ղեկավարը պատշաճ իրազեկվել է այս հանդիպման վերաբերյալ և եթե դուք այսօր այստեղ եք, ապա դուք ևս իրազեկված եք: Ինչ վեչաբերում է ոչ աշխատանքային օրերին հանրային լուսմներ անցկացնելուն, ապա, ցավոք, դա հնարավոր չէ:</p> <p><u>Արթուր Մնացականյանը («Հայրենիք Շին» ՍՊԸ)</u> <u>հավելեց.</u> Որպեսզի տարածքի բնակիչների իրազեկվածությունն ավելի լայն բնույթ կրի, մենք որպես գործունեության նախաձեռնող կողմ, պատրաստ ենք շաբաթ կամ կիրակի օրերին կազմակերպել նման առանձին հանդիպում տեղում՝ այսինքն տվյալ գործունեության իրականացման տարածքում: Ես կտրամադրեմ ձեզ իմ հեռախոսահամարը: Մենք պատրաստ ենք հանդիպմանը՝ երբ դուք ցանկանանաք:</p>
3	<p><u>Մամվել Ազնաուրյան, Շենգավիթ վարչական շրջանի բնակիչ</u></p> <p>6/1 և 6/2 շենքերը այս կառուցապատումից որևէ օգուտ չեն ստանալու, քանի որ արդյունքում մեր լուսավորությունը փակվելու է:</p>	<p><u>Արթուր Մնացականյան («Հայրենիք Շին» ՍՊԸ).</u> Ձեր նշված շենքերը տվյալ գործունեության տարածքից գտնվում են ավելի քան 100մ հեռավորության վրա և ես ձեզ կարող եմ վստահ ասել, որ համաձայն լուսավորության / ինստլացիոն հաշվարկների, նախատեսվող համալիրի կառուցումը ձեր և հարակից այլ շինությունների լուսավորության վրա որևէ բացասական ազդեցություն չի թողնում: Ես դա կարող եմ նաև ապացուցել:</p>
4	<p>Կուզենաինք իմանալ մյուս հանդիպումը ե՞րբ է լինելու:</p>	<p><u>Քրիստինե Սահակյան (ՇՄԱԳ փորձագետ)</u> Նախատեսվող գործունեության շրջանակներում սա առաջին հանրային քննարկում է: Դեռևս կունենանք ևս մեկ քննարկում, որը կանցակցավի այս նույն վայրում և որին կմասնակցի նաև ներկայացուցիչ ՀՀ ՇՄ նախարարությունից: Այդ հանդիպման վերաբերյալ Շենգավիթի քաղաքապետարանի կողմից համայնքի բնակիչներին պատշաճ</p>

		<p>կծանուցվի: Մենք ունենք այօրվա հանդիպման մասնակիցների հեռախոսահամարները և մեր հերթին ևս ձեզ կզանգահարենք: Շնորհակալ կլինենք, եթե դուք այդ մասին տեղեկացնեք նաև մյուսներին: Երկրորդ հանրային քննարկման հանդիպման ժամանակ նույնպես դուք կկարողանաք դեմել ձեզ հուզող բոլոր հարցերով, մտավախություններով և առաջարկություններով:</p>
5	<p><u>Գևորգ Նավասարդյան, Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետի տեղակալ</u></p> <p>Հաշվի առնելով պատերազմական իրավիճակը, կուզենաի պարզաբանել արդյո՞ք հնարավոր էք համարում նախատեսված ավտոկայանատեղիների ծառայումը որպես ապաստարաններ:</p>	<p><u>Գայանե Հովհաննիսյան (նախագծի գլխավոր ճարտարապետ)</u></p> <p>Մա մեզ համար ևս կարևոր հարց է եղել և մենք նախագծային լուծումներն իրականացրել ենք այնպես, որպեսզի անհրաժեշտության դեպքում ստորգետնյա ավտոկայանատեղիները կարողանան ծառայել նաև որպես ապաստարաններ: Եռահարկ ստորգետնյա ավտոկայանատեղին ունի մոտ 3600մ² մակերես, որտեղ նախատեսված են նաև պահուստային սենյակներ, որոնք նույնպես կարող են տրամադրվել բնակիչներին: Մենք այնտեղ ունենք պոմպակայաններ, էլեկտրավահանակ, իսկ տեխնիկական բոլոր սենյակները կարող են ապահովել ապաստարանի գործունեությունը:</p>
6	<p><u>Վարդան Գաբրիելյան, Շենգավիթ վարչական շրջանի բնակիչ</u></p> <p>1. Ներկայացվեց, որ ոռոգման համար նախատեսվում է օգտագործել հարակից Արտաշատի ջրանցքը: Մակայն այդ ջրով ոռոգելը մեր բնակչության համար կարող է պատուհաս դառնալ, քանի որ այն նեխած է և տհաճ հոտ է գալիս: Հատկապես ամռանը սարսափելի է, քանի որ մոծակներ են հավաքվում: Մեզ շատ օգնած կլինեք, եթե այդ ջրանցի մաքրման հարցը լուծվեր: Լավ կլիներ, որ այդ հատվածում այն փակվեր, քանի որ բնակիչները ինչ ասես այնտեղ լցում են:</p> <p>2. Ինձ հետաքրքրում է կոյուղու հեռացման հարցերը: Հարակից շենքերը (6/1, 6/2 շենքեր) կոյուղու հետ կապված խնդիրներ ունեն, քանի որ այդ տարածքում</p>	<p><u>Արթուր Մնացականյանը («Հայրենիք Շին» ՍՊԸ)</u></p> <p>Շնորհակալություն, մենք դա անպայման հաշվի կառնենք:</p> <p><u>Գայանե Հովհաննիսյան (նախագծի գլխավոր ճարտարապետ)</u></p> <p>Հարակից շենքերի կոյուղու խնդիրը մենք լուծել չենք կարող, դա մեր իրավասությունների ներքո չէ և դրա համար</p>

<p>հաճախակի խցանումներ են լինում: Կարծում եմ դա կապված է տարածքի գերբնակեցման հետ, քանի որ կոյուղին կառուցվել է դեռևս 1970-ականներին, երբ տարածքում շենքերը շատ քիչ էին:</p>	<p>կան համապատասխան պատասխանատուներ: Ինչ վերաբերում է նախատեսվող բնակելի համալիրին, ապա տրված տեխնիկական պայմանի համաձայն, կոյուղաջրերի հեռացման համար մեզ տրվել է հոր, որը գտնվում է Բաղյուկովի փողոցի վրա և չի առնչվում ձեր կողմից նշված շենքերի հորերի հետ: Եթե այդտեղ նման խնդիր լիներ, ապա տեխնիկական պայման ստանալը պարզապես հնարավոր չէր լինի:</p>
--	---

Բնակիչների կողմից բարձրացվեցին մի շարք այլ հարցեր, որոնք նախատեսվող գործունեության իրականացման հետ որևէ առնչություն չունենին (ավտոտնակների ապամոնտաժում, դատական հայցեր, տարածքի հին բնակիչների համար բակերի կանաչապատում, ոռոգում, խաղահրապարակի ստեղծում, ծառահատում և այլն): ՇՄԱԳ փորձագետ Ք. Սահակյանը հորդորեց չշեղվել քննարկման բուն թեմայից, որը վերաբերում է միայն Ֆրունզեի 10/4 հասցեի շուրջ 4076 ք.մ հաղատարածքին և միայն նրա սահմաններում նախատեսվող գործունեությանը, որն ամբողջովին պարսպապատ է և համաձայն պետական գրանցման վկայականի պատկանում է նախաձեռնողին՝ «Հայրենիք Շին» ՍՊԸ-ին, իսկ նախագծային լուծումները համապատասխանում են Երևան քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին:

Հանդիպումն ամփոփեց Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը՝ շնորհակալություն հայտնելով հանդիպման բոլոր մասնակիցներին և ևս մեկ անգամ հիշեցնելով, որ դեռևս կլինի երկրորդ հանրային քննարկումը, որի վերաբերյալ պատշաճ կձևանուցվի համայնքի բնակիչներին:

Հանրային քննարկմանը մասնակցող համայնքի բնակիչները և շնորհակալություն հայտնեցին հանդիպման համար և նշեցին, որ իրենք ևս դեմ չէին լինի ապրելու նման համալիրում:

Մասնակիցների ցուցակը և հանրային քննարկման տեսաձայնագրությունը ներկայացվում են սույն արձանագրությանը կից:

Քննարկումների պատասխանատու
և վարող՝



Գ. Նավասարդյան,
Երևանի քաղաքապետարանի
բնապահպանության վարչության
պետի տեղակալ

Արձանագրող՝



Ք. Սահակյան,
ՇՄԱԳ փորձագետ

Չեղարկող՝

Ա. Մնացականյան,
«Հայրենիք Շին» ՍՊԸ տնօրեն

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«_18_» դեկտեմբեր, 2020

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մ. Ֆրունզեի փողոցի 10/4 հասցեում գտնվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման
Նախագծի վերաբերյալ

(1-ին փուլի հանրային քննարկում)

Մասնակիցների ցուցակ

	Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
1.	Գաբրիելյան Լարսյան	շինարար	48 86 72	<i>[Signature]</i>
2.	Աղբաբեկյան Գարեգին	ճարտար	48 01 48	<i>[Signature]</i>
3.	Վաչագանյան Գրիգոր	ճարտար	48 01 49	<i>[Signature]</i>
4.	Պողոսյան Լուսինե	ճարտար	077 53 02 60	<i>[Signature]</i>
5.	Գաբրիելյան Մարտին	ճարտար	48 07 86	<i>[Signature]</i>
6.	Վահրամյան Արմեն	ինժեներ	077 48 59 49	
7.	Բաբայան Լուսինե	ճարտարապետության պրոֆեսոր ճարտար	091 52 93 27	<i>[Signature]</i>
8.	Գաբրիելյան Իսախանյան	«ՏԵՍՍ» ՍՊԸ Գործառն, Խաղաղության	093 16 15 01	<i>[Signature]</i>
9.	Պողոսյան Լուսինե	ճարտար	095 53 80 00	<i>[Signature]</i>
10.	Վաչագանյան Արմեն	ճարտար	098 06 36 00	<i>[Signature]</i>
11.	Սարգսյան Կարեն	ճարտար	077 93 36 88	<i>[Signature]</i>
12.	Մանուկյան Լուսինե	«Մանուկյան Լուսինե» ՍՊԸ ՎՊՈ ԿՐԵՈՒՄ	093 15 16 16	<i>[Signature]</i>
13.	Վանդուկյան Գրիգոր	ճարտար	091 09 49 90	<i>[Signature]</i>
14.	Վանդուկյան Գրիգոր	ճարտար	094 57 36 85	<i>[Signature]</i>

	Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
15.	Մարկ Կարաբեկյան	Շենգակերտ ՀԷ համ. բաժնի վարիչ	055-504005	Մարկ
16.	Զարեհ Դևրյան	Շենգակերտ վարչական շրջ. գյուղական համայնքի ԲԾԳ	093.505454	Զարեհ
17.	Մարգարիտ Բաբայան	Երևանի քաղաքի Կ. Գեղամյան	093543968	Մարգարիտ
18.				
19.				
20.				
21.				
22.				
23.				
24.				
25.				
26.				
27.				
28.				
29.				
30.				
31.				
32.				
33.				